ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀՌՉԱԿԱԳՐԻ ՊԵՏԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Գ.Գ. Հարությունյան - ՀՀ ՍԴ նախագահ, պրոֆեսոր (զեկույց Հայաստանի անկախության մասին հռչակագրի ընդունման 20-ամյակին նվիրված ընդունելության առիթով, 23 օգոստոսի 2010թ.)

Հանդիսավոր ընդունելության հարգելի մասնակիցներ,

Հարգարժան գործընկերներ,

Ցանկանում եմ նախ բոլոր ներկաներին եւ մեր ժողովրդին շնորհավորել Հայաստանի անկախության մասին հռչակագրի ընդունման 20-ամյակի կապակցությամբ։ Ինձ համար, որպես Հռչակագրի տեքստը կազմող համահեղինակներից մեկի, հիացմունք ու հպարտություն է առաջացնում այն բանի գիտակցումը, որ Հայաստանի անկախության մասին հռչակագիրն անանց արժեք է իր թե° պատմաքաղաքական նշանակությամբ եւ թե° պետականագիտական մնայուն դերով ու դերակատարությամբ։

Սահմանադրական զարգացումների միջազգային փորձի համեմատական վեր-լուծությունը վկայում է, որ սահմանադրական անկախ պետությունների ծնունդը նախ հռչակվում է այն նպատակների, ցանկությունների, արժեքների համակարգային ամբողջականության մեջ, որոնք պետականության կայացման անկյունաքարը պետք է հանդիսանան, այնուհետեւ դրան հետեւում է պետության քաղաքական կայացումը։

Օրինակ՝ 1774թ. սեպտեմբերին անգլիական գաղութները Ֆիլադելֆիայում հրավիրեցին առաջին մայրցամաքային կոնգրեսը, որը բողոքի ձայն բարձրացրեց գաղութների իրավունքների ոտնահարման վերաբերյալ։ Արդեն 1775թ. սկսվում է անկախության համար ուղղակի պայքարը։ 1776թ. հունիսին հրավիրված երկրորդ մայրցամաքային կոնգրեսն առաջ է քաշում անկախության հռչակագրի ընդունման անհրաժեշտության հարցը։ Այն ընդունվում է 1776թ. հունիսի 4-ին։ Ամերիկյան նահանգների հետագա սերտ գործակցության եւ միասնական պետականության հաստատման ու ամրապնդման համար առանցքային նշանակություն ունեցավ 1787թ. Սահմանադիր ժողովի կողմից Սահմանադրության մշակումը եւ ընդունումը, որը հետագայում վավերացվեց նահանգների կողմից։ Անկախության հռչակագիրը եւ

ապա Սահմանադրությունը դարձան ամերիկյան պետականության գոյության ու զարգացման գլխավոր երաշխիքը։

Նախկին Խորհրդային միության փլուզման ծանր ու հիվանդագին փուլում մեզանում նույնպես կյանքի թելադրանքն էր անկախ պետականության կայացման խելամիտ քայլերի առաջադրումն ու իրականացումը։ Նորանկախ Հայաստանի պատմությունը վկայում է, որ հայ ժողովուրդը, նրա քաղաքական ղեկավարությունն անսխալական գտնվեցին Հայաստանի անկախության հռչակագրի ընդունման թե՞ ժամանակի ընտրության եւ թե՞ձեւի ու բովանդակության առումով։

Հռչակագրի նախապատրաստման ու տարբեր նախագծերի համադրման համար ստեղծվեց հատուկ խորհրդարանական հանձնաժողով։ Վերջինիս աշխատանքի բնույթը, ներկայացված տարբեր նախագծերի քննարկման ընթացքը շատ ընդհանրություններ ունեին հայ իրականության մեջ հրավիրված սահմանադիր ժողովների հետ՝ առաջին հերթին հասարակական համաձայնության մթնոլորտի ապահովման առումով։ Պատահական չէր, որ, ինչպես առիթն ունեցել եմ շեշտել, Հռչակագիրն ընդունվեց մեծ խանդավառությամբ։

Ձեւի առումով Հայաստանի անկախության մասին հռչակագիրն ուներ էական մի առանձնահատկություն։ Այն ազդարարում էր անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը։ Նման ձեւակերպումը Հռչակագրի ընդունման պահին որոշ քաղաքական տարաձայնությունների տեղիք տվեց։ Սակայն կյանքը վկայեց, որ հայ քաղաքական միտքը եզակի խորաթափանցությամբ ու աշխարհաքաղաքական իրողությունների խելամիտ հաշվառմամբ կարողացավ միանգամայն ճիշտ ու պատմականորեն արդարացված մոտեցում որդեգրել՝ խուսափելով հնարավոր բացասական էկզոգեն գործոնների լուրջ ներազդեցությունից։ Այդ ձեւակերպումն ուներ նաեւ արժեհամակարգային էական նշանակություն։ Ամենայն պատասխանատվությամբ գիտակցվում էր, որ քաղաքական կողմնորոշումը միայն բավարար չէ. անկախ պետականության հաստատման, հռչակագրային արժեքները կյանքի կոչելու համար տեւական ու հետեւողական աշխատանք է հարկավոր։ Նման մոտեցումը պետականագիտական առումով լիովին արդարացված է եւ պետականության կայացման ծրագրանպատակային քաղաքականության իրականացման լայն հնարավորություն է ընձեռում։

Բովանդակային առումով Անկախության հռչակագիրը հայ սահմանադրական մշակույթի պատմության մեջ որակապես նոր էջ բացեց։ **Այն հիմնարար, հետեւողականորեն համակարգված, պատմատրամաբանական խոր ընդհանրացումներ բովանդակող, ազգային ինքնության առաջնահերթությունները հաշվի առնող, միջազգային սահմանադրաիրավական զարգացումների ընդհանուր տրամաբանությունից ելնող նորմերի ու սկզբունքների համակարգային ամբողջականություն է**, որը, ինչպես նշել եմ ՀՀ Սահմանադրության ընդունման 15-ամյակի առիթով, երբեք չի կորցնի իր թե՞պատմական եւ թե՞իրավական արժեբանական նշանակությունը։

Անհրաժեշտ եմ համարում առավել հանգամանորեն անդրադառնալ Հռչակագրի մի շարք կոնկրետ դրույթների։ Այն առաջին հերթին հանդես եկավ որպես «Հայաստանի ժողովրդի միասնական կամքի» արտահայտություն։ Միաժամանակ, անկախ ու ինքնիշխան պետականության հիմքում դնելով միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերն ու սկզբունքները, խնդիր ունենալով «ժողովրդավարական, իրավական հասարակարգի ստեղծումը»՝ հռչակեց, որ «Հայոց պետականության կրողը Հայաստանի Հանրապետության ժողովուրդն է, որն իր իշխանությունն իրականացնում է անմիջականորեն եւ ներկայացուցչական մարմինների միջոցով՝ ՀՀ Սահմանադրության եւ օրենքների հիման վրա»։ Նման ձեւակերպումն անկյունաքարային նշանակություն ունի իրավական պետության կայացման եւ այդ նպատակով անհրաժեշտ իրավական ու կառուցակարգային երաշխիքներ ստեղծելու համար։

Սահմանադրաիրավական առումով բացառիկ կարեւորվում են քաղաքացիության կարգավիճակի, անխտրականության սկզբունքի, խոսքի, մամուլի, խղճի ազատության, քաղաքական ազատությունների, երկրի ինքնիշխանության, միջազգային իրավասուբյեկտության, տնտեսական, սոցիալական, մշակութային հարաբերությունների իրավական հիմունքների, բազմակուսակցականության, ազատական տնտեսական հարաբերությունների արմատավորման եւ մի շարք այլ հիմնարար արժեքների վերաբերյալ հռչակագրային մոտեցումները։ Դրանք սահմանադրական նոր զարգացումների համար սկզբունքային կողմնորոշիչներ դարձան։ Հռչակագրով պարտավորվելով Հայաստանի Հանրապետությունում ապահովել «օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների տարանջատում»՝

հիմք դրվեց որակապես նոր իրավական համակարգի, որը պետք է դառնար հռչակագրային նպատակների իրականացման երաշխիքը։

Անխուսափելիորեն Հռչակագիրը բովանդակեց նաեւ նորմեր, որոնք պայմանավորված էին ժամանակի թելադրանքով, Խորհրդային միության դեպի փլուզում գնալու իրողությամբ եւ պետական համակարգի առումով՝ մասից ամբողջ դառնալու հրամայականներով։ Դրանով էին պայմանավորված հիմնականում Հռչակագրի 5-7-րդ հոդվածներում ամրագրված դրույթները, որոնք վերաբերում են երկրի անվտանգությանն ու սահմանների անձեռնմխելիությանը, ինքնուրույն արտաքին քաղաքականությանը, ԽՍՀՄ ազգային հարստության մեջ իր մասնաբաժինն ունենալու իրավունքին եւ այլն։

Առանձնահատուկ ուշադրության է արժանի Հռչակագրի 11-րդ հոդվածը, որով սահմանվեց, որ Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում 1915 թվականին Օսմանյան Թուրքիայում եւ Արեւմտյան Հայաստանում հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործին։ Այդ ձեւակերպումը երկունքի ծանր պահեր ունեցավ եւ երկար ու լուրջ բանավեճերի արդյունքում միայն կարողացավ հռչակագրային իր ամրագրումն ստանալ։ Սակայն կյանքը ցույց տվեց, որ այն առավել քան կենսունակ է նաեւ մեր օրերի համար։ Այդ մասին է, մասնավորապես, վկայում ՀՀ սահմանադրական դատարանի վերջերս կայացրած որոշումը հայ-թուրքական արձանագրությունների առնչությամբ։

Անկախության հռչակագրին բնորոշ են ոչ միայն հավատարմությունն ազգային ակունքներին, այլեւ սկզբունքների ու նորմերի ներքին կուռ ամբողջականությունն ու փոխլրացումը, ներդաշնակությունն առաջադիմական իրավական լուծումներին ու սահմանադրական զարգացումների միջազգային միտումներին։ Այն լինելով անանց արժեք հայ պետականության կայացման ու հաստատման գործում, պետականագիտական լրջագույն դերակատարություն ունեցավ իրավական նոր համակարգի ձեւավորման համար։

Պետականության կայացման առաջին փուլում ձեռնարկվեցին որոշակի քայլեր Անկախության հռչակագրից բխող՝ ՀԽՍՀ 1978թ. Սահմանադրության ընթացիկ մասնակի փոփոխությունների ուղղությամբ։ Գրեթե ամեն մի նոր օրենք ընդունելիս անհրաժեշտություն էր առաջանում փոփոխություններ և լրացումներ մտցնել Սահմանադրության մեջ։ Նման պայմաններում **1990թ. դեկտեմբերի 10-ին ընդունվեց**

«Սահմանադրական օրենք «Հայաստանի անկախության մասին» հռչակագրին համապատասխան ընդունված օրենսդրական ակտերի մասին», որի համաձայն մինչև ՀՀ Սահմանադրության ընդունումը դադարեցվում էր գործող Սահմանադրության այն դրույթների գործողությունը, որոնք հակասում էին «Հայաստանի անկախության մասին» հռչակագրի հիման վրա ՀՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունված օրենքներին: Փաստորեն, այդ օրենքի ընդունմամբ ընտրվեց գործող Սահմանադրության մեջ փոփոխություններ և լրացումներ չմտցնելու ուղին: Նման «լողացող» իրավաբանական ձևակերպումը հակասական իմաստ ուներ, որովհետև ստացվում էր, որ Հայաստանի Հանրապետությունը և՞ ուներ Սահմանադրություն, և՞ չուներ այն:

Հռչակագրի նորմերը, մինչեւ ՀՀ Սահմանադրության ընդունումը, իրենց հետագա որոշակիացումը գտան «Անկախ պետականության հիմնադրույթների մասին» ՀՀ սահմանադրական օրենքում, որն ընդունվեց Գերագույն խորհրդի կողմից 1991թ. սեպտեմբերի 25-ին (ուժը կորցրեց ՀՀ Սահմանադրության 116-րդ հոդվածի հիման վրա): Այս օրենքը կարևոր հանգրվան էր սահմանադրական բարենորոգման ճանապարհին, որովհետև իր բնույթով նպատակային, ծրագրային, համալիր ակտ էր, որն ամրագրում էր հետագա սահմանադրական զարգացման համար կարևորագույն նշանակություն ունեցող մի շարք դրույթներ:

Սույն սահմանադրական օրենքով, ամրագրելով ՀՀ սահմանադրական կարգը՝ որպես անկախ ժողովրդավարական պետություն, հասարակական հարաբերությունների հիմքում դրվեցին ժողովրդաիշխանության, իշխանությունների տարանջատման, մարդկանց իրավահավասարության, անխտրականության, իրավունքների ու ազատությունների ճանաչման ու ապահովման սկզբունքները: Ամրագրվեց նաեւ սահմանադրական այն կարեւոր սկզբունքը, որ իշխանության մարմինները կարող են իրականացնել միայն օրենքով իրենց վերապահված լիազորություններ: Օրենքի 5-րդ հոդվածն ամրագրեց, որ «Հայաստանի Հանրապետության բարձրագույն պաշտոնատար անձը Հայաստանի Հանրապետության նախագահն է, որը գլխավորում է Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանությունը եւ ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը երկրի ներսում եւ միջազգային հարաբերություններում»: Այս սահմանադրական օրենքը գործնականում պետական իշխանության նոր համակարգի ձեւավորման

հիմքը դրեց եւ իրավական երաշխիք հանդիսացավ հռչակագրային հիմնարար սկզբունքներից ելնելով վերափոխելու խորհրդային օրենքներով ձեւավորված իշխանության միասնական բուրգը, որի գագաթին **Գերագույն** խորհուրդն էր, ու տարանջատելու օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունները: Նման գործընթացը միջազգային սահմանադրական զարգացումների այն եզակի օրինակներից է, երբ համակարգի ներսում էվոլյուցիոն զարգացումը հանգեցնում է սահմանադրաիրավական հարաբերությունների որակապես նոր վիճակի, ընդհուպ՝ պետական իշխանության բնույթի համակարգային վերափոխման:

Եթե փորձենք անդրադարձ կատարել Անկախության հռչակագրի իրավաքաղաքական բնույթին, ապա այն, **որպես կենսագոյի հիմնական արժեքների ու կողմնորոշումների շուրջ հասարակական համաձայնություն**, առաջին հերթին, ինչպես դա բնորոշ է նաեւ սահմանադրություններին, իրականացրեց **հիմնադիր գործառույթ**:

Հռչակագրի ընդունումը ենթադրեց հասարակության իրավաքաղաքական նոր կարգավիճակի արձանագրում, որի հիմքում դրված են որոշակի քաղաքակրթական արժեքներ, նպատակներ ու սկզբունքներ: Հռչակագիրը հասարակական համաձայնությամբ ամրագրեց հայ սոցիալական հանրության պատմական տվյալ փուլին բնորոշ համատեղ գոյի արդյունքները, առաջընթացի նպատակներն ու ուղղությունները, առաջադրեց համակարգի կայունության ու դինամիկ զարգացման կողմնորոշիչները:

Պատմականորեն մշտապես կարեւորվել է ու համակարգային փլուզման իրողության պայմաններում առանձնահատուկ դեր ունեցավ նաեւ Հռչակագրի **իրավական գործառույթը**: Անկախության հռչակագիրը, ինչպես նշվեց, ոչ միայն իրավական համակարգի ձեւավորման հիմքը դարձավ, այլեւ պայմանավորեց ողջ իրավական համակարգի զարգացման ուղղվածությունն ու բնույթը:

Հռչակագիրը կոչված էր նաեւ իրականացնելու Սահմանադրությանը բնորոշ լուրջ **կազմակերպական գործառույթ**, համաձայն որի՝ որակապես նոր խնդիրներ դրվեցին հանրային կյանքը հռչակագրային նորմերին ու սկզբունքներին համապատասխանեցնելու ու վերակազմակերպելու ուղղությամբ, գտնելու դրան համապատասխան կառուցակարգային լուծումներ, ձեւավորելու հռչակագրային արժեքները կյանքի կոչելու իրավաքաղաքական նախադրյալներ:

Հայաստանի անկախության հռչակագիրը, բովանդակելով աշխարհայացքային հստակ կողմնորոշիչներ, այնպիսի նորմ-նպատակներ ու նորմ-սկզբունքներ, որոնք ամրագրեցին պետականության հաստատման ու առաջընթաց զարգացման սոցիալական որոշակի արժեքների համակարգ, դրանց ձգտելու կոնկրետ միջոցներ ու մոտեցումներ, հստակեցրեց մեր պետական համակարգի **գաղափարախոսական ուղղվածությունը**:

Անառարկելի է նաեւ, որ Անկախության հռչակագիրն իրավաքաղաքական փաստաթուղթ է: Դրա բովանդակությունը պայմանավորվեց երկրի քաղաքական կողմնորոշումներով, քաղաքական ուժերի իրական հարաբերակցությամբ, քաղաքական ու իրավական մշակույթի ընդհանուր մակարդակով եւ մի շարք այլ գործոններով: Հետեւաբար, Հռչակագիրը չէր կարող քաղաքական ենթատեքստ չունենալ: Սակայն դա չպետք է շփոթ առաջացնի եւ հռչակագրային նորմերը մեկնաբանվեն որպես լոկ քաղաքական դրույթներ: Որքանով էլ այդ նորմերն իրենց հիմքում քաղաքական ենթատեքստ ունենան կամ քաղաքական փոխհամաձայնության արդյունք լինեն, միեւնույն է, հասարակական համաձայնության արդյունք դառնալուց հետո դրանք միայն ու միայն իրավական նորմեր են, ունեն գերակա նշանակություն եւ պայմանավորում են ողջ իրավական համակարգի ձեւավորման բնույթն ու հիմնական բովանդակությունը:

Հռչակագրային նորմերի էական առանձնահատկությունն այն է, որ դրանք չպետք է միտված լինեն ընթացիկ քաղաքական կողմնորոշումներին, հիմքում ունենան ընթացիկ քաղաքական շահերը, այլ միտված լինելով սոցիալական հանրության հեռանկարային կողմնորոշումներին՝ ապահովեն հասարակության կայուն եւ դինամիկ առաջընթացը:

Հետեւությունն այն է, որ քաղաքականությունը միջոց ու հնարավորություն է հանրությանը կողմնորոշելու արժեհամակարգային ընտրություն կատարելու հարցում: Այդ ընտրությունը կատարելուց հետո քաղաքականությունն ստանում է իր բնական իրավական սահմանները՝ դրսեւորվելու միայն ու միայն իրավունքի շրջանակներում:

Հայաստանի անկախության մասին հռչակագրը նոր շունչ ստացավ ՀՀ Սահմանադրության առաջաբանում վկայակոչվելով: Այս հանգամանքն ընդհուպ դարձել է միջազգային քննարկումների առարկա: Սակայն իրողությունն այն է, որ

Հռչակագիրը հայկական սահմանադրականության անբաժանելի մասն է եւ մեր սահմանադրական մշակույթի կարեւորագույն ձեռքբերումներից մեկը։

Հարգելի բարեկամներ,

Կրկին անգամ շնորհավորելով բոլորիս Հայաստանի անկախության մասին հռչակագրի ընդունման 20-ամյակի կապակցությամբ, ցանկանում եմ նաեւ շեշտել, որ այսօրվա իրավաքաղաքական զարգացումների գերագույն խնդիրն է ՀՀ Սահմանադրությամբ վերարժեվորված հռչակագրային հիմնարար սկզբունքները կյանքի կոչելը։ Դրանից ամեն մի շեղում վտանգում է մեր անկախ պետականության հաստատման գործընթացը, որի սկիզբը դրվեց Հայաստանի անկախության մասին 1990 թվականի օգոստոսի 23-ին ՀՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունված հռչակագրով։

Շնորհակալություն ուշադրության համար։